ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ

ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ **պ.գ.թ. Դիաննա Հրաչյայի Միրիջանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **պ.գ.դ., պրոֆ. Համլետ Լենսերի Պետրոսյան**
պ.գ.թ. Արմինե Լևոնի Զոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 12-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի «Հնագիտության և ազգագրության» 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Բերդի տարածաշրջանի (նախկին Շամշադինի, ապա՝ Տավուշի շրջան, այժմ՝ Բերդ խոշորացված համայնք) միջնադարյան ամրաշինական կառույցների և պաշտպանական համակարգի ուսումնասիրությանը: Այն զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան հատվածը: Տարածաշրջանը հարավից սահմանակից է Ճամբարակի, արևմուտքից՝ Իջևանի, իսկ հյուսիսից և արևելքից՝ Ադրբեջանի Հանրապետության Ղազախի, Թովուզի և Գետաբեկի շրջաններին: Նշված տարածքը մտնում էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառի մեջ: Բուն գավառը զբաղեցնում էր ավելի ընդարձակ տարածք՝ ներառելով նաև ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանը և Ղազախի շրջանի մի մասը:

Հետազոտության խնդիրներն ու նպատակը: Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել համակարգված հետազոտել և ներկայացնել տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական կառույցները, դրանց վերաբերող տվյալները, մինչ օրս կատարված ուսումնասիրություններն ու հետազոտողների կարծիքները: Միաժամանակ խնդիր է դրվել հետազոտել խնդրո առարկա հուշարձանների կառուցման սկզբունքները, շինարարական փուլերը, ժամանակագրությունը և պատմական ընթացքը: Ատենախոսության սահմաններում առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել քննարկվող հուշարձանների լուսանկարներ, գրչանկարներ և չափագրություններ, պեղումներից հայտնաբերված մեծաքանակ հնագիտական իրեր:

Թեմայի արդիականությունը: Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգի ուսումնասիրությունը կարևոր է հետևյալ պատճառներով՝

1. քննվող տարածաշրջանում սակավաթիվ են միջնադարյան հուշարձանների հետազոտությունները և դրանց վերաբերող տվյալները,
2. ուսումնասիրվող հնավայրերից շատերը գտնվում են խիտ անտառներում, ինչի հետևանքով դրանք աստիճանաբար ավերվում և անհետանում են,
3. ներկայացվող տարածաշրջանը սահմանակից է Ադրբեջանին, որոշ ամրոցներ գտնվում են շփման գծին շատ մոտ և աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված՝ ունեն առաջնային ուսումնասիրության կարիք:

Վերոնշյալ հանգամանքները ցույց են տալիս ուսումնասիրվող թեմայի կարևորությունը և հրատապությունը, հատկապես ստեղծված անվտանգային խնդիրների և Ադրբեջանի կողմից տարվող տարածքային և մշակութային բռնազավթման քաղաքականության պայմաններում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Աշխատանքը կատարվել է մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի քննությամբ, հնագիտական իրերի հետազոտմամբ, ինչպես նաև տեղում իրականացրած մեր դիտարկումների արդյունքների համադրմամբ: Թեմայի իրականացման նպատակով կազմակերպել ենք դաշտային հետախուզական գիտարշավներ և քննարկվող բոլոր հուշարձաններում իրականացրել ենք տարածքի զննություն, պահպանված շինությունների ուսումնասիրում, չափագրում, վերգետնյա նյութերի հետազոտում, օդային լուսանկարում, տեղագրական հանույթի կազմում: Ամբողջությամբ ուսումնասիրվել է տարբեր տարիների ստուգողական և համակարգված պեղումներով, վերգետնյա հետազոտություններով և

պատահական բացահայտումներով ի հայտ եկած հնագիտական նյութը, որը դասակարգվել է ըստ ժամանակագրության, գործառութային նշանակության և տիպերի:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության բաժինը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են հեղինակի՝ ՀՀ ԲԿԳԿ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից երաշխավորված և արտերկրի պարբերականներում հրատարակված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Ներկայացվող նյութն առավել ընկալելի դարձնելու նպատակով, աշխատանքի ներածականում առանձին ենթագլխով հակիրճ շարադրված է Բերդի տարածաշրջանի վարչատարածքային և ֆիզիկա-աշխարհագրական պատկերը: Ներածության վերջին ենթաբաժինը նվիրված է թեմայի ուսումնասիրության պատմությանը:

Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Հետազոտության ժամանակաշրջանը միջնադարն է: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննության ենթակա տարածաշրջանից հայտնի միջնադարյան ամրաշինական կառույցները թվագրվում են X-XIII դարերով, ուսումնասիրության ժամանակային սահմանները ևս ընդգրկում են միայն նշված ժամանակափուլերը:

Հետազոտության աշխարհագրական սահմաններն ընդգրկում են ներկայիս Բերդ խոշորացված համայնքի տարածքը: Խորհրդային տարիներին ուսումնասիրվող տարածաշրջանը կոչվել է շամշադինի, 1990-1995 թթ.՝ Տավուշի շրջան, որից հետո Տավուշ անունը տարածվել է ամբողջ մարզի վրա: Վարչատարածքային վերջին բաժանումով այն նույնական է Բերդ խոշորացված համայնքի տարածքի հետ: Այն զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան հատվածը, սահմանակցելով հարավից՝ Ճամբարակի, արևմուտքից՝ Իջևանի, իսկ հյուսիսից և արևելքից՝ Ադրբեջանի Հանրապետության Ղազախի, Թովուզի և Գետաբեկի շրջաններին: Նշված տարածքը մտնում էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառի մեջ: Բուն գավառը զբաղեցնում էր ավելի ընդարձակ տարածք՝ ներառելով նաև ներկայիս Ադրբեջանի Թովուզի շրջանը և Ղազախի շրջանի մի մասը:

Թեմայի ուսումնասիրության պատմությունը: Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների առաջին հետազոտությունը կատարել է XIX դարի տեղագիր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը: Իր հեղինակած «Արցախ» աշխատության մեջ, Քուստի գավառի բերդերը թվարկելիս, բանահավաքն անդրադարձել է Տավուշ, Երգեվանք, Կածարեթ և Նոր-բերդ ամրոցներին, մանրամասն ներկայացրել դրանց տեղը, դիրքը, պաշտպանական համակարգը, նկարագրել պահպանված կառույցները և այլն: Մ. Բարխուդարյանցի հաղորդումները ներկայացված են ականատեսի աչքերով և կարևոր աղբյուրագիտական հենք են հիշյալ հուշարձանների ուսումնասիրության համար:

Քննարկվող ամրոցներին վերաբերող հետազոտությունների շարքում մեծարժեք են նաև պատմական Հայաստանի բերդերի նշանավոր հետազոտող Միքայել Հովհաննիս-

յանի հաղորդումները: Սկզբնաղբյուրների հիման վրա գիտնականը մանրամասն ներկայացրել է Ուտիքի ամրոցները, դրանց տեղադրությունը, պատմական ընթացքը, նկարագրել առկա վիճակը, հիշյալ ամրոցներին վերաբերող մատենագրական վկայություններ, կատարել քննականդիտարկումներ դրանց անվան, տեղորոշման վերաբերյալ՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ:

Ուսումնասիրվող տարածքի միջնադարյան ամրոցների հետագա հետազոտությունները վերաբերում են Խորհրդային ժամանակաշրջանին: Տարածաշրջանի հուշարձանները հաշվառելու, լուսանկարելու, պահպանված արձանագրությունները վերծանելու և ընդօրինակելու նպատակով, 1935թ. կազմակերպվում է գիտարշավ՝ հնագետ Կարո Ղաֆադարյանի գլխավորությամբ:

Պատմական հուշարձանների ուսումնասիրման նպատակով, 1954թ. տարածաշրջան է մեկնում Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախումբը: 12 օր տևած գործուղման ընթացքում, հետազոտական խմբին հաջողվում է այցելել տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղերը, հաշվառել, չափագրել և լուսանկարել դրանց սահմաններում գտնվող պատմական հուշարձանները:

Քննարկվող տարածաշրջանի ամրաշինական կառուցվածքների ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեն նաև բանահավաք Ի. Չանգլյանի նյութերը: Ծնունդով տավուշեցի հետազոտողը (ներկայիս Բերդ համայնքի Այգեձոր գյուղից), լավ ծանոթ էր հայրենի շրջանի բնությանը և հնություններին, որի նկարագրություններն ու դիտարկումներն արվել են ականատեսի աչքերով, արժանահավատ են և ունեն գիտական մեծ արժեք:

Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների առաջին հնագիտական հետազոտությունները ձեռնարկվել են նախորդ դարի 80-ականներին, հնագետ Հայկ Եսայանի կողմից: Մասնավորապես, նրա ղեկավարությամբ ստուգողական բնույթի պեղումներ են իրականացվել Տավուշ ամրոցի միջնաբերդում և ստորին բերդի բլրալանջին, և գրեթե ամբողջությամբ պեղվել է ամրոցի եկեղեցին: Հիշյալ աշխատանքներին զուգընթաց, կարճաժամկետ հետախուական պեղումներ են կատարվել նաև Մածնաբերդի (հեղինակը ներկայացնում է Աղջկաբերդ ձևով) տարածքում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խնդրո առարկա տարածաշրջանի միջնադարյան ամրոցները մեծաքանակ չեն: Մեզ հասած հուշարձանների, դրանց վերաբերող մատենագրական տվյալների և մասնագիտական գրականության ուսումնասիրություններից Բերդի տարածաշրջանից հայտնի է միջնադարյան հինգ ամրոց՝ Նոր-բերդ, Կածարեթ, Երգեվանք, Մածնաբերդ և Տավուշ: Հանդիսանալով տարածաշրջանի պաշտպանական համակարգի կարևոր օղակներ, վերոնշյալ ամրոցներն աղբյուրներում գրեթե միշտ հիշատակվում են միասին և նույն իրադարձությունների կապակցությամբ: Ամրոցների հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն գրավոր սկզբնաղբյուրների, պահպանված կառույցների և հնագիտական նյութերի քննությամբ՝ թվագրվում են X-XIII դարերով: Հիշյալ ամրոցներն առավելապես տուժել են մոնղոլական արշավանքներից, որից հետո աստիճանաբար լքվել և ամայացել են:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Տարածաշրջանի քաղաքական իրավիճակը X-XIII դարերում: 914թ. Բագրատունյաց Հայաստանում գահ է բարձրանում Աշոտ Բ արքան (914-928), որն աչքի է ընկնում արաբների դեմ մղած ակտիվ պայքարով: Այս հանգամանքը հանգիստ չէր տալիս արաբ կառավարիչ Յուսուֆին, որն ամեն կերպ օգտագործում էր Աշոտ Բ-ի հետ ունեցած այլ իշխանավորների տարաձայնությունները, խրախուսում նրանց անջատողական տրամադրությունները: Աշոտ Երկաթի դեմ ապստամբած իշխանների թվում էր նաև Ուտիքի կառավարիչ Ամրամը, որը գրավում է Տավուշ բերդը, և իբրև ապահով ամրություն՝ այստեղ տեղափոխում իր ընտանիքի անդամներին: Սակայն Ցլիկ Ամրամի ապստամբությունը տապալվեց, և Ուտիքի բերդերը շարունակեցին մնալ արքունապատկան:

XI դարի առաջին կեսին Հարավային Կովկաս սկսեցին ներթափանցել թյուրք-սելջուկյան հրոսակախմբերը: Դրան զուգահեռ արագորեն վերելք էր ապրում Վրաստանը՝ լուրջ սպառնալիք ստեղծելով ոչ միայն Սելջուկյան իշխանության, այլև Կյուրիկյանների համար: Այդ գործընթացն առավել ակնհայտ դարձավ վրաց Դավիթ IV Շինարարի (1089-1125) օրոք: Ստեղծված բարդ իրավիճակում, Կյուրիկե Բ-ին հաջորդած նրա երկու որդիները՝ Դավիթն ու Աբասը, Լոռի-Տաշիրը զիջում են սելջուկներին՝ փոխարենը ստանալով նախկինում Կյուրիկյաններին պատկանած Տավուշը, Մաճնաբերդը և այլ շրջաններ: Նրանց տիրույթներն ընդգրկում էին Տավուշ և Խնձորուտ գետերի վերին հոսանքի ավազանները, որոնց կենտրոններն էին Տավուշ բերդն ու Մաճնաբերդը: Ավագ որդուն՝ Աբասին, բաժին է հասնում Տավուշ բերդը, իսկ կրտսերին՝ Դավթին, Մաճնաբերդը:

1144թ., 40-օրյա պաշարումից հետո, Զավլի զորապետը գրավում է Տավուշ բերդը, Աբասն ապաստանում է եղբոր մոտ՝ Մաճնաբերդում, ապա անցնում Վրաստան՝ Դեմետրե I-ի մոտ: Այդ վիճակը շարունակվեց մինչև 1203թ., երբ Զաքարյանների ազատագրական պայքարի արդյունքում Տավուշ բերդն ազատագրվում է Բլուզ Զաքարե Վահրամյանի կողմից:

XIII դարի 30-ական թվականներից սկիզբ են առնում տարածաշրջանը պատուհասած մոնղոլական արշավանքները: Մոնղոլական երկու զորաջոկատ՝ Մոլար նոյինի և Ղատաղա նոյինի գլխավորությամբ հարձակվում են Վահրամյան իշխանության վրա: Մոլար նոյինը իր զորքը բաժանում է երկու մասի, որոնցից մեկը իր գլխավորությամբ շարժվում է դեպի արևմուտք՝ պաշարելով Տավուշ, Կածարեթ, Նոր-բերդ և Գագ ամրոցները: Մյուս մասը շարժվում է հարավ-արևմուտք և շրջափակում Տերունական, Երգեվանք և Մաճնաբերդ ամրոցները:

Այսպիսով, մոնղոլների հետախուզական արշավանքների և դրանց հաջորդած Ջալալ Էդ-Դինի ասպատակությունների հետևանքով Վահրամյանների իշխանությունն աստիճանաբար թուլացավ, իսկ 1236թ. գրավվեց մոնղոլների կողմից: Հետևելով մյուս իշխանավորների օրինակին, Վահրամյանները ևս հպատակվեցին մոնղոլներին՝ որոշ չափով շարունակելով զգալի դեր խաղալ երկրի ռազմաքաղաքական կյանքում: Սակայն, դրանով հանդերձ, աստիճանաբար բռնեցին քայքայման ուղին և հեռացան պատմության թատերաբեմից:

1.2. Նոր-բերդ: Հուշարձանը տեղորոշելու հարցում մեծապես օգնում են Կիրակոս Գանձակեցու հաղորդումները, ըստ որի նրա հարևանությամբ է եղել Վարագավանքը: Ուսումնասիրություններով հաստատվում է, որ Նոր-բերդը գտնվում է Վարագավան-Վազաշեն ավտոճանապարհի աջ կողմում, սրացումով ավարտվող ժայռաբլրի գագաթին (աշխարհագրական կոորդ.՝ 40°59'17.55 N, 45°20'19.48 E): Ըստ պատմական աղբյուրների, XII-XIII դարերում Նոր-բերդը եղել է համանուն իշխանության նստոցը, որին տիրում էին Կյուրիկյան, ապա՝ Վահրամյան իշխանազունները: Մոնղոլական արշավանքների ժամանակ, ի շարս այլ ամրությունների, այն ևս գրավվում է:

Նոր-բերդը կառուցված է ռազմավարական առումով կարևոր վայրում, տարածքի նկատմամբ ունի իշխող դիրք, որից հյուսիս սկսվում է Կուր գետի տափարակը, իսկ հարավային կողմում՝ Տավուշի անտառածածկ սարերն են: Հետևաբար ամբողջությամբ ընկալելի է ամրոցի կարևորությունը տարածաշրջանի պաշտպանական համակարգում, ինչի մասին անուղղակի կերպով փաստում են նաև միջնադարյան աղբյուրների առատ վկայությունները: Հարավային և արևելյան կողմերից ամրոցը պաշտպանված է ուղղահայաց կտրվող ժայռերով, հյուսիսային մասից բավական դժվարահաս է և մոտենալ կարելի է միայն արևմտյան կողմի բլրալանջով: Ամրոցի պարիսպները չեն պահպանվել: Ամրոցանիստ բլրի միայն հյուսիսային ստորոտին երևում են ուղղանկյուն շինության և պատերի ավերակներ: Բլրի գագաթին պահպանվել են քարաշեն երկու կառույց: Դրանցից առաջինը ջրամբար է, կառուցված է գագաթի արևելյան եզրին, մեծամասամբ պահպանվել է, քանդված է միայն ծածկը: Պահպանված մյուս կառույցը գտնվում է հյուսիսային եզրին և անմիջապես կից է ջրամբարին: Այն մեզ է հասել կիսաքանդ վիճակում, պահպանվել են հյուսիսային և արևմտյան պատերը (պահպանված պատերի բարձրությունը՝ 100-120 սմ), որոնք ներսից ունեն ամրության համար արված որմնահեցեր: Կառույցի իրական գործառույթը մնում է չպարզված:

1.3. Կածարեթ: Գտնվում է Տավուշ գյուղի հարավային կողմում, երկարաձիգ բլրի գագաթին (աշխարհագրական կոորդ.՝ 40°55'00.90 N, 45°24'01.31 E): Բլրի ժայռե հիմքը ծգվում է գագաթի ամբողջ մակերեսով՝ արևելքից-արևմուտք ուղղությամբ: Սակայն ամրացված մասը բլրի միայն գագաթն է և զբաղեցնում է մոտ 400 մ^2 տարածք: Ամրոցակիր բլուրը բավական անառիկ է: Հարավից և արևելքից պաշտպանված է ուղղաձիգ, գահավեժ ժայռերով, հյուսիսային կողմից բլրալանջն ունի կտրուկ թեքություն, դժվարահաս է, և մոտենալ հնարավոր է միայն արևմտյան կողմից:

Ամրոցի հիմնադրման թվականը հայտնի չէ, սակայն ըստ մատենագրական վկայությունների, պահպանված կառույցների և վերգետնյա նյութերի՝ այն թվագրվում է XII-XIII դարերով: Առաջին անգամ հիշատակվում է Զաքարյանների կողմից Հայաստանի հյուսիսային շրջանների բերդերն ազատագրելու առնչությամբ: Հաջորդ վկայությունները վերաբերում են մոնղոլական շրջանին, որից հետո հուշարձանի մասին մատենագրական տեղեկություններ չկան:

Ամրոցն առաջին անգամ ուսումնասիրել է Մակար եպս. Բարխուդարյանցը, որից օգտվել են հետագա ուսումնասիրողները: Հուշարձանի ներկայիս վիճակը հիմնականում արտացոլում է Մ. Բարխուդարյանցի նկարագրությունները: Միայն որոշ կառույցներ այժմ կամ չեն պահպանվել, կամ գտնվում են ավերակ վիճակում: Դոյակ-ամրոցը մեծապես տուժել է նաև խորհրդային տարիներին գագաթին տեղադրված գեոդեզիական աշտարակի հետևանքով:

Բլրի գագաթին՝ ցցված ժայռերի վրա, հիմնականում հյուսիսային կողմում, պահպանվել են կառույցների և պարսպի մնացորդներ: Անմատչելի դարձնելու նպատակով՝ ժայռերի միջև եղած հատվածներն ու խոցելի մասերը ևս փակվել են քարուկիր պատերով: Մուտքը չի պահպանվել, սակայն դիտարկումները հուշում են, որ այն եղել է հյուսիսային ճակատի կենտրոնական մասում: Այս տեսակետի համար հիմք են հանդիսանում նաև աշտարակաձև կառույցի պահպանված պատերը:

1.4. Երգեվանք: Հնավայրը գտնվում է Այգեձոր գյուղի արևմտյան կողմում, բարձր, ժայռոտ լեռան արևելյան լանջին (աշխարհագրական կոորդ.՝ 40°50'47.35 N, 45°31'23.88 E): Տարածաշրջանի մյուս բերդերի նման, Երգեվանքի կառուցման ճշգրիտ ժամանակն անհայտ է: Սակայն գրավոր աղբյուրների հիմամբ դարձյալ թվագրվում է XII-XIII դարերով: Բերդին վերաբերող մատենագիր անդրանիկ տեղեկությունները վերաբերում են Զաքարյանների ազատագրական գործողությունների շրջանին: Հաջորդիվ այն հիշատակվում է մոնղոլների կողմից գրավված ամրոցների շարքում:

Բերդի տեղադրության և պահպանվածության մասին նկարագրել է Մ. Բարխուդարյանցը, որից օգտվել են ավելի ուշ շրջանի հետազոտողները: Ըստ նրա՝ Երգեվանքը գտնվում է Ղուլալի (այժմ Այգեձոր) գյուղի արևմտյան կողմում, բարձր սարի վրա, որից պահպանվել են պարսպապատերը, իսկ որոշ տեղերում՝ դրանց ավերակները:

Երգեվանք բերդի տեղադրությանը, պահպանված կառույցների և դրանց մանրամասներին բավական մանրակրկիտ անդրադարձել է նաև Ի. Չանգլյանը: Հետազոտողի պատկերավոր հաղորդումները մեծապես օգնում են հստակ տեղորոշել հուշարձանի տեղը՝ Ախնջի գետի ձախ կողմում, «Գոմեր» թաղամասի հարավ-արևմտյան մասում բարձրացող ժայռի լանջին: Մեր դաշտային հետազոտությունների արդյունքներն ամբողջապես հաստատում են հուշարձանի տեղի և դիրքի վերաբերյալ նախորդ հետազոտողների նկարագրությունները, և հատկապես Ի. Չանգլյանի տեղեկությունները: Միանգամայն ճիշտ են Կ. Ղաֆադարյանի դիտարկումները, թե Խորանաշատից Աղջկաբերդը (Մածնաբերդը) չի երևում, քանզի դիմացի լեռները փակում են այն: Խոսքը հենց այն լեռան մասին է, որի լանջին գտնվում է Երգեվանք բերդը: Հուշարձանին վերաբերող վերոնշյալ նկարագրությունների վերլուծությունից հետևում է, որ ժայռի արևելյան լանջին կառուցված ամրոցը և հակառակ կողմում՝ ձորակի մեջ եղած բնակելի թաղամասը կազմել են մի ամբողջություն, և վտանգի ժամանակ բնակչությունը բարձրացել և ամրացել է Երգեվանք բերդում:

1.5. Մածնաբերդ: Պետք է նշել, որ Մածնաբերդին վերաբերող մատենագիր նյութերում հուշարձանի տեղը չի նշվում՝ տարակարծություններ առաջացնելով նրա տեղորոշման շուրջ: Հետազոտողների մի մասի կարծիքով Մածնաբերդը Ադրբեջանի Չովդառ գյուղից (Դաշքեսանի շրջան) հարավ-արևելք գտնվող Մլզնաբերդ ամրոցն է: Նման տեսակետի համար հիմք են հանդիսացել Մ. Բարխուդարյանցի հաղորդումները: Տեղագիրն այն նույնականացրել է Մածնաբերդի հետ և ներկայացրել Մլզնաբերդ կամ Մածնաբերդ ձևով: Ուսումնասիրողների մյուս խումբն ամրոցը տեղորոշում է Բերդի տարածաշրջանում: Անշուշտ, խնդրի հիմնավոր պարզաբանման համար անհրաժեշտ են լրացուցիչ, ծանրակշիռ կռվաններ: Այնուամենայնիվ, առկա տվյալների քննությունը մեզ նույնպես բերում է այն համոզման, որ Մածնաբերդն Այգեձորի մոտ գտնվող Աղջկաբերդն է:

Մածնաբերդը (կամ Աղջկաբերդը) գնտվում է Այգեձոր գյուղից 6 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի աջափնյա ժայռի գագաթին (աշխարհագրական կոորդ.՝ 40°48'30.86 N, 45°30'05.35 E): Ամրոցի տեղն օժտված է բնական անառիկությամբ. հյուսիսային, հարավային և արևմտյան կողմերից ողողում են գետի ջրերը, իսկ ամրոցակիր ժայռի բարձր, ուղղաձիգ պատերն այն դարձնում են միանգամայն անմատչելի: Ամրոցը բաղկացած է միջնաբերդից և ստորին բերդից, հասանելի է միայն արևելյան կողմից, որտեղ կառուցվել են պարիսպներ: Տեղի բնակչության շրջանում բերդն առավելապես հայտնի է Աղջկաքար անունով, որը կապված է մի ավանդազրույցի հետ, ըստ որի, երբ Աշոտ Երկաթը արաբների կողմից պաշարված է լինում ամրոցում, բերդապահներից մի աղջիկ իր երկար ծամերի մեջ մեծ քարեր դնելով՝ դրանք նետում է թշնամու վրա: Արաբները խուճապահար դիմում են փախուստի, որից հետո բերդի անունը մնում է Աղջկաքար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՏԱՎՈՒՇ ԲԵՐԴ

2.1. Անվանաձևերը և գրավոր սկզբնաղբյուրները: Հուշարձանը գտնվում է Բերդ քաղաքի հարավարևելյան մասում (աշխարհագրական կոորդ.՝ 40°87'59.42 N, 45°40'00.11 E), և տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական կառույցների շարքում աչքի է ընկնում իր դիրքով, մեծությամբ և անհամեմատ լավ պահպանվածությամբ: Ի տարբերություն միջնադարյան բազմաթիվ ամրությունների, Տավուշ բերդի անվան և տեղորոշման հետ կապված տարակարծություններ չկան: Միջնադարյան պատմիչները մեզ են փոխանցել նրա իրական անունը՝ Տավուշ, այն ներկայացնելով իբրև ամրոց, բերդ և անգամ դղյակ: Ըստ Ա. Շահնազարյանի, ամրոցն անվանակոչվել է նրա հարավային մասով հոսող համանուն գետի պատճառով: Համադրելով գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ հեղինակը հավելում է, որ Տավուշ բերդը եղել է արքունապատկան, կառուցվել է Սմբատ Ա (890-914) թագավորի կողմից՝ IX դարի վերջից մինչև X դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածում՝ նպատակ ունենալով ամրապնդել իր իշխանությունը Ուտի գավառում և հզորացնել Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանությունը: Ժողովրդի շրջանում հուշարձանն առավելապես տարածված է Ցլիկ Ամրամի բերդ անվանաձևով, որը կապված է ամրոցի տարածքում ծավալված պատմական իրադարձությունների և մեծամասամբ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում նկարագրվող դեպքերի հետ:

2.2. Նախկին հետազոտությունները: Տավուշ բերդի անդրանիկ հետազոտությունները կատարել է Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը: Իր հեղինակած «Արցախ» աշխատության մեջ հետազոտողն անդրադարձել է նաև Տավուշ ամրոցին, մանրամասն ներկայացրել հուշարձանի տեղը, դիրքը, պաշտպանական համակարգը, նկարագրել պահպանված կառույցների մնացորդները և այլն:

Հուշարձանին վերաբերող հետազոտությունների շարքում արժեքավոր են նաև Միքայել Հովհաննիսյանի հաղորդումները: Սկզբնաղբյուրների հիման վրա նա մանրամասն անդրադարձել է բերդի տեղադրությանը, պատմական ընթացքին, նկարագրել

առկա վիճակը: Նկատենք, որ Մ. Հովհաննիսյանն անձամբ չի տեսել հուշարձանը և նյութը շարադրել է առկա ուսումնասիրությունների, մեծամասամբ՝ Մակար Բարխուդարյանցի նկարագրությունների հիմամբ: Այդուհանդերձ, աշխատության մեջ Տավուշ բերդին վերաբերող նկարագրությունները ներկայացված են նյութի քննությամբ և վերլուծություններով:

Տավուշ բերդի հաջորդ ուսումնասիրություններն իրականացվել են 1935թ. Կ. Ղաֆադարյանի ղեկավարած դաշտային հետազոտությունների ընթացքում: Տեղում իրականացրած տեղազննությունից հետո, նա մանրամասն նկարագրել է հուշարձանի ընդհանուր վիճակը, պահպանված կառույցները, դրանք համադրել նախորդ հետազոտողների տեղեկությունների հետ: Կ. Ղաֆադարյանը հատուկ ուշադրություն է դարձրել նաև միջնաբերդի վերգետնյա նյութերին և կարևորել հուշարձանի պեղումները:

Շամշադինի շրջանի պատմական հուշարձանների ուսումնասիրման նպատակով, 1954թ. տարածաշրջան է գործուղվում Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախումբը: Կատարած հետազոտական աշխատանքների արդյունքերի շարքում հետաքրքիր են արշավախմբի ղեկավար Հ. Եղիազարյանի դիտարկումները Տավուշի մուտքի վերաբերյալ, որն, ըստ գիտնականի, եղել է միջնաբերդի գագաթամասերի արանքից:

Հուշարձանի առաջին պեղումները կատարվել են դեռևս 1986-1988 թթ. հնագետ Հ. Եսայանի կողմից: Այդ տարիներին փոքրածավալ պեղումներ են իրականացվել և՛ միջնաբերդում, և՛ ստորին բերդի տարածքում: Ստորին բերդում իրականացված պեղումներով գրեթե ամբողջությամբ բացվել է Ս. Աստվածածին եկեղեցին և նրան հյուսիսից կից գավիթը:

2.3. Միջնաբերդի պեղումները: Ամրոցի միջնաբերդը զբաղեցնում է մոտ 500 մ^2 տարածք, որի հյուսիսային, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան կողմերից կառուցվել են կիսաբոլոր աշտարակներով հզոր պարիսպներ, հարավային մասն անմատչելի է, պաշտպանված է բարձր, ուղղաձիգ կտրվող ժայռերով, իսկ արևելյան և արևմտյան մասերում, բնական անառակությունից բացի, կառուցվել են նաև լրացուցիչ պաշտպանական կառուցվածքներ: Միջնաբերդի տարածքի զգալի մասը զբաղեցնում է հիմնաժայռը, որի սրացող հատվածները ձգվում են հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Միջնաբերդի օգտագործելի հատվածը դարավանդաձև հարթություն է, որտեղ կազմակերպվել են տնտեսական և բնակելի հատվածները:

Միջնաբերդի պեղումների արդյունքում փաստագրվել են բնակելի, տնտեսական կառուցվածքներ, ամրոցի պաշտպանությանը, շինարարական փուլերին և պատմական ընթացքին վերաբերող մանրամասներ, մեծաքանակ հնագիտական իրեր: Ուշագրավ արդյունքներ արձանագրվեցին նաև միջնաբերդի հարավային գագաթին՝ հիմնաժայռի վրա: Այստեղ բացվեցին պատերի, հարթակների և աստիճանների մնացորդներ, որոնք վկայում են, որ միջնաբերդի այս հատվածը ևս կառուցապատվել է: Նախնական դիտարկմամբ, այստեղ ժայռի երկայնքով կառուցվել են ցածր պատերով դիտակետեր, որտեղից հսկել են ամրոցից հարավ գտնվող տարածքները: Դատելով պեղումների արդյունքներից՝ պարզ է դառնում, որ միջնաբերդում բնակելի և խոհանոցային-տնտեսա-

կան հատվածը կենտրոնացված է եղել պահպանված պարիսպների և հիմնաժայռի միջնամասում: Զինվորների ամենօրյա շարժը և միջնաբերդի հսկողությունն իրականացվել է հարավային մասով անցնող արևելք-արևմուտք ուղեգծով, որտեղ և փաստագրվել են պաշտպանական և մարտավարական կետերը:

2.4. Ճարտարապետությունը, կառուցապատման սկզբունքները և փուլերը: Տավուշ բերդը կառուցված է ժայռոտ բլրի գագաթին, բավական անառիկ է, տարածքի նկատմամբ ունի իշխող դիրք և լայն տեսահորիզոն: Այն բաղկացած է միջնաբերդից և ստորին բերդից: Միջնաբերդը պաշտպանված է երեք կողմերով անցնող բարձր պարիսպներով, իսկ հարավային կողմի ուղղաձիգ և գահավեժ ժայռերն ամրոցն օժտում են բնական անառիկությամբ: Տեղանքի բնական պայմանները հուշում են, որ նույն կերպ էր կազմակերպված նաև ստորին բերդի պաշտպանությունը՝ երեք կողմերից եղել են հաստահեղույս պարիսպներ, իսկ հարավային մասում բնական պատնեշ է հանդիսացել Տավուշ գետը: Ամրոցի անառիկությունն ավելացնելու նպատակով, բերդանիստ ժայռի հյուսիսային ճակատների որոշ հատվածներ կտրել են, ինչի արդյունքում դրանք ստացել են ուղղահայաց տեսք:

Ստորին բերդի տարածքում պահպանվել է միայն Ս. Աստվածածին եկեղեցին, այլ կառույցներ մինչ օրս չեն փաստագրվել: Ստորին բերդի պարիսպները մեծամասամբ քանդվել են և՛ միջնադարյան ավերումների, և՛ նախորդ դարում ամրոցի շուրջ ծավալված կառուցապատումների հետևանքով, որի ընթացքում պարիսպների քարերն օգտագործվել են որպես շինաքար: Այժմ պարիսպների որոշ հատվածներ՝ 3-4 մ բարձրությամբ, պահպանվել են ամրոցից արևմուտք կառուցված տների այգիներում:

Տավուշ ամրոցի միջնաբերդի պարիսպները կառուցված են միջին չափերի կոպտատաշ քարերով, կապակցող նյութը՝ կրաշաղախ: Պարսպապատերին լրացուցիչ ամրություն հաղորդելու նպատակով, պատերի մեջ հորիզոնական դիրքով տեղադրվել են նաև փայտե գերաններ, որոնց մնացորդները մինչ օրս տեսանելի են: Այս աշխատանքներն իրականացվել են մեծամասամբ հակաերկրաշարժային միջոցառումների շրջանակում, որը կիրառվել է միջնադարյան բազմաթիվ հուշարձանների դեպքում: Հատկանշական է, որ ստորին բերդի պարիսպների կառուցման համար մեծամասամբ օգտագործվել են գետաքարեր, ի տարբերություն միջնաբերդի, որտեղ դրանց թիվն անհամեմատ սակավ է: Միջնաբերդի պարիսպների բազմաթիվ մասերում ակնառու են տարբեր ժամանակներում արված նորոգումների, հավելումների և ձևափոխությունների հետքերը: Հյուսիսային պարսպագծին կառուցված են կիսաշրջանաձև երեք աշտարակներ, որոնք հոծ են և կատարել են որմնահեցերի գործառույթ:

Իր գոյության ընթացքում ամրոցին տիրելու համար մղված մարտերի հետևանքով միջնաբերդի տարբեր հատվածներ քանդվել են, հետագայում կատարվել են նորոգումներ աշխատանքներ և հավելումներ: Սակայն ուսումնասիրությունները փաստում են, որ վերոնշյալից զատ, այն մեծապես տուժել է Գանձակի՝ 1139թ. երկրաշարժից, որի հետևանքով քանդվել է նաև ամրոցի Ս. Աստվածածին եկեղեցին:

Տավուշի միջնաբերդի արևմտյան եզրին կառուցված է գլխավոր դիտակետաշտարակը: Վերջինիս տեղի ընտրությունը պատահական չէ: Այն ապահովում էր լայն

տեսահորիզոն, որտեղից ամբողջապես դիտարկվում էին ամրոցից հյուսիս, հարավ և արևմուտք բացվող տարածությունները՝ սկսած Միափորի լեռներից մինչև Տավուշ գետի ստորին հոսանքները: Այստեղից նաև տեսողական կապ էր ապահովվում Տավուշ բերդից հյուսիս գտնվող Կածարեթ ամրոցի հետ:

Տավուշ բերդի ժամանակագրական սահմանները հստակեցնելուն մեծապես օգնում են մատենագրական առատ տվյալները: Ըստ այդմ՝ հուշարձանը թվագրվում է X-XIII դարերով, հայտնի է Աշոտ Երկաթի գահակալության տարիներից մինչև մոնղոլական արշավանքները: Ձեռնարկված հնագիտական ուսումնասիրություններով պարզվում է, որ իր գոյության վերջին փուլում Տավուշ բերդն ավերել են և այրել: Միջնաբերդում՝ վերին շերտերը պեղելու ընթացքում, տարբեր հատվածներում փաստագրվել են ավերումների հետքեր, այրված գերանների մասեր, փայտածուխի առատ մնացորդներ: Դա մոնղոլական ավերիչ հարձակումների արդյունք է: Ա. Շահնազարյանի դիտարկմամբ, բոլոր այն վայրերում, որտեղ մոնղոլները հանդիպում էին դիմադրության, կազմակերպում էին անողոք սպանդ և ավերումներ, իսկ չդիմադրելու դեպքում բավարարվում էին կողոպուտով և հարկատու դարձնելով:

Որպես տարածաշրջանի կարևոր ամրություն, Տավուշ բերդը քանիցս ձեռքից-ձեռք է անցել: Ըստ մատենագիր սկզբնաղբյուրների՝ հայտնի է նման երեք փաստ.

Ա. 1144թ., երբ երկարատև պաշարումից հետո՝ բերդն անցավ Զավլի զորապետին: Դրանով Տավուշ բերդի Կյուրիկյան իշխանությունը վերացավ և տեղում ստեղծվեց սելջուկյան սուլթանություն:

Բ. 1203թ., երբ ամրոցն ազատագրվեց Զաքարյանների կողմից՝ ընդգրկվելով վրացական թագավորության ենթակայությամբ իշխող Վահրամյանների կազմում:

Գ. 1236թ., երբ Տավուշ բերդը գրավվեց մոնղոլների կողմից, կորցրեց իր պաշտպանական նշանակությունը և հետզհետե դուրս մղվեց պատմության թատերաբեմից:

2.5. Տնտեսական կյանքը: Քննարկվող տարածաշրջանի միջնադարյան ամրոցներում տնտեսական կյանքի մասին տեղեկությունները հիմնականում ձևավորվում են Տավուշ բերդի պեղումների արդյունքներով: Ամրոցի միջնաբերդում փաստագրվել են մի շարք կառուցվածքներ և քարե գործիքներ, որոնք կիրառվել են մթերքը և ջուրը ամբարելու, վերամշակելու և սնունդ պատրաստելու համար: Տավուշ բերդի պեղումներից հայտնաբերբած աղորիքների և երկանքների առատությունը խոսում է տեղում հացահատիկի վերամշակման մեծ ծավալների մասին: Միջնաբերդի պեղումներից հայտնաբերվել են նաև մեծ թվով կենդանական ոսկորներ: Ըստ ուսումնասիրությունների՝ դրանք պատկանում են մանր և խոշոր եղջերավոր անասունների՝ ոչխար, կով, ինչպես նաև խոզ, որոնք կազմում էին կերակրացանկի մսային տեսականին:

2.6. Ս. Աստվածածին եկեղեցու պեղումները: Աղոթատունը փոքր, հատակագծում ուղղանկյուն, միանավ սրահ է՝ հարավարևելյան մասում փոքր ավանդատնով: Կառուցված է խոշոր, ճեղքված կրաքարով, միակ մուտքը հյուսիսարևմտյան կողմից է: Հետաքրքիր է, որ եկեղեցին կանոնավոր ուղղանկյուն չէ, արևելյան և արևմտյան պատերն ունեն որոշակի շեղում: Եկեղեցու խորանում բեմ չկա, և աղոթասրահի ամբողջ հատակը՝ ավագ խորանով հանդերձ, նույն նիշի վրա է: Կառույցի հորինվածքը պարզ է,

որմերին հարդարանքի տարրեր չկան, պեղումների ընթացքում ճարտարապետական դետալներ չեն հայտնաբերվել:

Եկեղեցուց հյուսիս պահպանվել են ուղղանկյուն սենյակի հյուսիսային և արևմտյան պատերի հատվածներ (պահպանված պատերի բարձրությունը մինչև 1 մ), որոնք եզերում են հյուսիսային կողմում արված թաղումները: Այս փաստը, ինչպես նաև եկեղեցու մուտքը հյուսիսարևմտյան կողմում բացելու հանգամանքը հիմք են տալիս կարծելու, որ այս մասը ծառայել է որպես գավիթ: Տեղում իրականացրած մանրազնին դիտարկումները վկայում են, որ այն կառուցվել է ավելի ուշ, քանզի տարբերվում է կառուցման ձևով և վարպետությամբ:

Գավիթի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նոր տապանաքարեր, որոնց ընդհանուր թիվը կազմում է տասնինը: Եկեղեցու շուրջը թաղումներ են արվել հյուսիսային և արևելյան կողմերում: Տապանաքարերի շարքում կան ինչպես խոշոր, երեսը լավ հարթեցրած տապաններ, այնպես էլ փոքր և միջին չափերի, կիսամշակ գերեզմանաքարեր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1. Պատմական համատեքստը: IX-X դարերում Հայաստանում նորից աշխուժանում է ամրաշինական կառույցների հիմնումը կամ վերակառուցումը: Այս գործընթացը լայն թափ է ստանում հատկապես IX դարի վերջում, երբ Բագրատունիների ղեկավարությամբ, տևական դադարից հետո նորից վեր է հառնում հայոց անկախ պետականությունը: Սակայն Բագրատունիներն ի զորու չեղան զսպելու տնտեսապես հզորացած կենտրոնախույս ուժերին, որը հանգեցրեց երկրի տարբեր շրջաններում մանր թագավորությունների առաջացմանը: Այն իր հետ բերեց ամրաշինական նոր կառույցների ստեղծման անհրաժեշտություն, որոնք միտված էին հսկելու հակառակորդին և պաշտպանելու առանձին թագավորությունների կամ իշխանությունների տիրույթները: Դրա արդյունքում Հայաստանը նորից պատվեց փոքր ամրությունների ցանցով՝ ձևավորելով առանձին շրջանների պաշտպանական համակարգը:

3.2. Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինության սկզբունքները և պաշտպանական համակարգը: Ինչպես վերը նշեցինք, ավատատիրական կարգերի հաստատումից հետո, Հայաստանում ձևավորվեցին առանձին շրջանների պաշտպանությունն իրականացնող ամրաշինական կառույցների համակարգեր: Դրանց առանցքը հանդիսացող գլխավոր ամրությունը հանդիսանում էր իշխանության կենտրոնը, իշխանի հիմնական նստոցը: Բնականաբար այն լինում էր ավելի մեծ, որտեղ տեղակայվում էր նաև մշտական կայազորը, և իր ռազմական կարողությամբ պատրաստ էր ետ մղել թշնամու հարձակումները: Մյուս բերդերը համեմատաբար փոքր էին, որոշ դեպքերում՝ սոսկ ամրացված դիտակետեր կամ ռազմականացված հենակետեր: Դրանք կառուցվում էին կենտրոնական ամրոցից ոչ հեռու, տեսողական հեռավորության վրա, խնդիր ունեին տեղեկացնել թշնամու մոտալուտ վտանգի մասին և դիմա-

դրություն ցույց տալով՝ հնարավորինս կանգնեցնել նրա առաջխաղացումը: Բերդի տարածաշրջանի ամրությունների դեպքում դրանցից էին՝ Տավուշ բերդի համար՝ Կաճարեթ, Մաճնաբերդի համար՝ Երգեվանք ամրոցները:

Պաշտպանական մեկ համակարգի մաս կազմող ամրությունները տեղակայվում էին տեսանելի հեռավորության վրա և իրար հետ կապ էին պահում լուսային ազդանշանների միջոցով: Այդ նպատակին էին ծառայում ամրոցներում կառուցված պահակակետ-դիտակետերը, որոնք առանձնանում էին իրենց կառուցվածքով և տեսադաշտով: Նման դիտակետ-աշտարակ փաստագրվել է Տավուշ բերդում, Լոռե բերդաքաղաքում, Արցախի հուշարձաններում, ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորության Սիս, Անարզաբա, Լամբրոն ամրոցներում: Հետաքրքիր է, որ Լամբրոնի բերդում նման ազդանշաններ տրվում էին նաև նրա աշտարակների միջև: Հատուկ այդ նպատակով կային կլոր բացված անցքեր, որոնցից տրվող լուսային ազդանշանը տեսանելի էր միայն ամրոցի մյուս աշտարակներից:

Ամրաշինական կառույցների նման խումբը ստեղծում էր մի ամրակուռ համակարգ, որը չեզոքցնելու համար թշնամին ստիպված էր գրավել նրա բաղադրիչը հանդիսացող բոլոր բերդերը: Թերևս սրանով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ Բերդի տարածաշրջանի ամրոցները ներկայացնելիս, միջնադարյան պատմիչները գրեթե միշտ դրանք հիշատակում են միասին:

Առկա տվյալները հիմք են տալիս արձանագրել, որ «պաշտպանական համակարգ» եզրույթը վերագրելի է ինչպես առանձին ամրաշինական կառույցներին, այնպես էլ դրանց խմբերին: Առաջին դեպքում նկատի է առնվում բնական անառիկությունը, պարիսպները, աշտարակները, մոտեցումների և մուտքերի կազմակերպումը, խանդակը և պաշտպանությանը միտված այլ կառուցվածքներ: Երկրորդ դեպքում «պաշտպանական համակարգ» հասկացությունը վերաբերում է ամրաշինական կառույցների խմբին և ներկայացնում է որոշակի տարածքի պաշտպանության ընդհանուր նկարագիրը: Այս առումով նկատի է առնվում ամրոցների տեղաբաշխվածությունը, դիրքը, փոխադարձ կապը, գործառույթները և այլն:

Բերդի տարածաշրջանի, և առհասարակ, Հայաստանի միջնադարյան ամրաշինական կառույցները և՛ մատենագիր աղբյուրներում, և՛ հետազոտողների շրջանում հավասարապես նշվում են թե՛ բերդ, և թե՛ամրոց անվանաձևով: Սակայն ենթադրելի է, որ «բերդ» կամ «ամրոց» բառեզրերն ունեն իմաստային որոշակի տարբերություն, որը պայմանավորված էր ամրաշինական կառույցների գործառույթով՝ թելադրելով նրանց չափերն ու կառուցվածքը: Առկա տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ «ամրոց» եզրույթը կիրառելի է ամրաշինական բոլոր տեսակի կառույցների համար, այդ թվում նաև դիտակետերի, փոքրաթիվ զինվորներով հենակետերի, անմատչելի պատսպավայրերի և այլն, որտեղից հնարավոր էր կազմակերպել նաև կարճատև պաշտպանություն: Իսկ «բերդ» անվանաձևն օգտագործելի է պաշտպանական լուրջ կառույցների դեպքում, իշխանական նստոց հանդիսացող գլխավոր ամրությունների համար, որոնք աչքի են ընկնում իրենց չափերով, հզոր պարսպապատերով ու աշտարակներով:

Միջնադարյան ամրաշինական կառույցների և հատկապես պաշտպանական համակարգի քննությունից նկատելի է, որ վերջինիս մաս էին կազմում նաև վանական համալիրները: Պաշտպանական համակարգում եկեղեցական և ամրաշինական կառույցների զուգակցումը միջնադարյան Հայաստանում լայն տարածում ուներ: Ըստ Ա. Զարյանի, դրանք ձևավորեցին երկկենտրոն պաշտպանական համակարգեր, որոնք բաղկացած էին բերդից և վանքից:

Դատելով վանք-ամրոցների տեղագրական պատկերից՝ հստակ է, որ դրանցից շատերը կառուցվել են բերդերի տեսադաշտում: Ուսումնասիրվող տարածաշրջանի դեպքում այս երևույթն ակնհայտ է Երգեվանք-Խորանաշատ և Նոր-բերդ-Վարագավանք հուշարձանախմբերում: Դա ակնառու է նաև Կիրակոս Գանձակեցու հաղորդումներից, ըստ որի Նոր-բերդը գտնվում էր Վարագավանքի մոտ, իսկ Երգեվանք բերդը՝ Խորանաշատ վանքի դիմաց:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԵՐԸ

4.1. Կածարեթ և Մածնաբերդ: Կածարեթ բերդից գտնված խեցեղեն օրինակները վերգետնյա են, բեկոտված և սակավաթիվ, ուստի դրանց մանրամասն քննությանն անդրադառնալու անհրաժեշտություն չկա: Դրանք զարգացած միջնադարում տարածված կավանոթների մասեր են, որոնք ըստ զուգահեռ նյութերի թվագրվում են XII-XIII դարերով:

Մածնաբերդից գտված հնագիտական իրերը հայտնաբերվել են 1980-ական թվականներին Հ. Եսայանի իրականացրած ստուգողական պեղումների արդյունքում: Դրանք գերազանցապես խեցեղեն անոթների բեկորներ են: Ըստ կիրառական նշանակության՝ դրանք բաժանվում են երկու մեծ խմբի՝ կենցաղային և շինարարական: Առաջին խմբի խեցեղեն հավաքածուն պարունակում է մեծամասամբ անջնարակ, տարբեր չափերի կարասների, կճուճների, ծորակավոր անոթների, թաս-քրեղանների, խփերի օրինակներ: Ըստ համեմատական նյութի՝ դրանք թվագրվում են XII-XIII դարերով, լայնորեն տարածված էին միջնադարյան Հայաստանում և հայտնի են համաժամանակյա բազմաթիվ հուշարձաններից:

Առավել հետաքրքիր են ջնարակած շինարարական խեցեղենի օրինակները, որոնք ներկայացնում են Մածնաբերդից հայտնաբերված խեցեղենի մյուս խումբը: Հարթ և կիսաշրջանաձև կղմինդրներից զատ, պահպանվել են նաև ջնարակապատ սալերի և աղյուսների բեկորներ: Դրանք երկու տեսակի են՝ տափակ և հատած բուրգի տեսքով: Սալերի դիմերեսը պատված է փիրուզագույն կամ սև ջնարակով: Նման գունազարդ սալիկների օգտագործումը բավական տարածված էր միջնադարյան Հայաստանում, որոնք հանդիսանում էին ճարտարապետական կառույցների հարդարամասերից՝ զարդարելով կառույցների ներքին և արտաքին պատերը: Մածնաբերդի ջնարակած սալերի թերևս լավագույն զուգահեռները պահպանվել են Ոսկեպարի բերդ-աշտարակի պատերին՝ պատկերավոր տվյալներ հաղորդելով վերջիններիս կիրառության մասին:

4.2. Տավուշ բերդ: Հնագիտական իրերի ամենամեծ հավաքածուն ի հայտ է եկել Տավուշ բերդի պեղումներից, որն էլ հանդիսանում է քննության առարկա տարածա-

շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության հենքը: Ամրոցի պեղումներից հայտնաբերված հնագիտական նյութերի գերակշիռ մասը խեցեղենն է, հիմնականում բեկորային վիճակում: Կավակերտ գտածոներն ըստ գործառութային նշանակության բաժանվում են երկու հիմնական խմբի՝ կենցաղային և շինարարական: Կենցաղային խեցեղենն իր հերթին բաժանվում է հետևյալ մեծ խմբերի.

Ա. մթերքի պահպանության և տեղափոխման համար նախատեսված անոթներ (կարասներ, կճուճներ, կժեր),

Բ. սեղանի սպասք (թասեր, քրեղաններ, սափորներ),

Գ. հատուկ կիրառության խեցեղեն (ձվածիր անոթներ (սնդկամաններ), ճրագներ, աղամաններ, ձձումներ):

Վերոնշյալ մեծ խմբերը, ըստ տեխնոլոգիական պատրաստման առանձնահատկությունների, բաժանվում են երկու ենթախմբի՝ անջնարակ և ջնարակապատ: Անջնարակ խեցեղենը կազմում է գտածոների գերակշիռ մասը: Տավուշ բերդի պեղումներից հայտնաբերված ջնարակապատ նյութերը ևս ստվար խումբ են կազմում, որոնց դասակարգումը կատարել ենք ըստ ժամանակափուլերի. IX դար, X-XI դարեր և XII-XIII դարեր:

Միջնադարյան Հայաստանի ջնարակապատ խեցեղենը ողջ Արևելքի խեցեգործական ձեռբերումների մասն է կազմում, միաժամանակ իր ներդրումն ունենալով դրա հարստացման և զարգացման գործում: Հետաքրքիր է, որ վաղ ջնարակապատ խեցեղենի առաջին ուսումնասիրողներից Ա. Լեյնը հատուկ ընդգծում է, որ եթե Պարսկաստանն իր ներդրումն է ունեցել ջնարակի, իսկ Միջին Ասիան՝ ներկերի ու անգոբի կատարելագործման գործում, ապա Հայաստանը հավասարապես մասնակցել է թե՛ առաջին, և թե՛ երկրորդ գործընթացին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան շրջաններն ընդգրկող Բերդի տարածաշրջանը Մեծ Հայքի Ուտիք նահանգի ութ գավառներից հինգերորդն էր, զբաղեցնում էր ավելի ընդարձակ տարածք՝ ներառելով նաև ներկայիս Ադրբեջանի որոշ շրջաններ: Տարածաշրջանում առկա են X-XIII դարերի, պահպանվածության տարբեր աստիճաններ ունեցող ամրաշինական կառույցներ: Սակայն դրանց ուսումնասիրության ուղղությամբ սակավաթիվ են դաշտային հետախուզական աշխատանքներն ու հնագիտական պեղումները: Այդուհանդերձ, առկա նյութերի ուսումնասիրությունը թույլ է ներկայացնել Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգի ընդհանուր պատկերը և կատարել հետևյալ եզրակացությունները:

- Քննարկվող տարածաշրջանից հայտնի է միջնադարյան հինգ ամրոց: Բնական պայմաններից ելնելով, դրանք կառուցված են ժայռոտ բարձունքներին, Միափորի լեռներից սկիզբ առնող երեք գետերի մատույցներում, կիրճերի եզրերին: Պատմահնագիտական սկզբնաղբյուրների քննությամբ, դրանք գոյատևել են X-XIII դարերում, անընդհատ ձեռքից-ձեռք են անցել, իսկ մոնղոլների ավերիչ արշավանքների հետևանքով՝ ավերվել և լքվել են:

- Դրանց ուսումնասիրությունը սկսվել է XIX դարի վերջից՝ տեղագիր, բանահավաք Մ. եպս. Բարխուդարյանցի կողմից, իսկ հնագիտական առաջին, մասնակի հետազոտություններն իրականացվել են XX դարի 80-ական թվականներին:
- Առկա նյութերի վերլուծությունը հուշում է, որ Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների օրգանական շարունակությունն են հանդիսացել նրանցից հյուսիս և արևելք ամրաշինական մի շարք կառույցներ ևս: Սակայն ներկա փուլում դրանց ուսումնասիրությունը հնարավոր չէ, քանզի գտնվում են հարևան Ադրբեջանի տարածքում:
- Քննության առարկա ամրությունների մեծ մասը հնագիտորեն ուսումնասիրված չեն: Բացառություն են կազմում Տավուշ բերդը, և որոշ առումով նաև Մածնաբերդը: Դրանց տարածքում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները և առկա նյութերը բավարար են կարծելու, որ այդ ամրոցները կառուցվել կամ վերակառուցվել են բրոնզ-երկաթեդարյան ամրությունների տեղում, ինչը բավական տարածված երևույթ էր Հայաստանում:
- Ուսումնասիրված հինգ ամրոցներից առանձնակի կարևորություն են ներկայացնում Տավուշ բերդի պեղումները, որոնց արդյունքում հայտնաբերված կառուցվածքները և հնագիտական նյութերը նոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն ամրոցի ճարտարապետության և շինարարական փուլերի, այլև տարածաշրջանի կենցաղի, տնտեսական կյանքի, առևտրական կապերի և պաշտպանական համակարգի մասին:
- Տավուշ բերդից հայտնաբերված խեցեղեն նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննության ենթակա տարածաշրջանը մշակութային ընդհանրություններ ունի նաև Ուտիքի այլ հնավայրերից հայտնի օրինակների հետ: Մասնավորապես, Տավուշ ամրոցի միջնաբերդի ստորին շերտերից հայտնաբերված X-XI դարերի ջնարակած խեցեղենի օրինակները մեծապես զուգադրվում են Արցախի Տիգրանակերտի, Օրեն-Կալայի պեղումներից գտնված օրինակների հետ: Այս հանգամանքը միանգամայն օրինաչափ է, քանզի ներկայիս Բերդի տարածաշրջանի տարածքը ևս Ուտիքի կազմում էր՝ զբաղեցնելով պատմական Տավուշ գավառի մի մասը: Հետևաբար, այս համատեքստում ակնհայտ է պատմաքաղաքական, առևտրական, մշակութային կապը Տավուշ ամրոցի և Ուտիքի այլ կենտրոնների հետ:
- Տավուշ բերդը կարևոր դեր է խաղացել նաև կրոնամշակութային կյանքում: Ասվածի օգտին է վկայում այն փաստը, որ 1139թ. Աղվանից կաթողիկոս ընտրելու համար գումարված եկեղեցական ժողովը տեղի ունեցել այս ամրոցում:
- Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների կառուցումն ու պաշտպանությունն իրականացվել է գործող ամրոցաշինության և պաշտպանական համակարգերի կազմակերպման սկզբունքներով: Դրանց զուգահեռները հայտնի են ինչպես Հայաստանում, մասնավորապես՝ Սյունիքում և Արցախում, որոնք աչքի են ընկնում բնական պայմանների նմանությամբ, այնպես և հարևան երկրներում, ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում:
- Միջնադարյան ամրաշինական կառույցների և պաշտպանական համակարգի քննությունից ակներև է, որ բերդ-ամրոցների հետ մեկտեղ, որպես պաշտպանական կառույցներ հանդես են եկել նաև որոշ վանական համալիրներ: Դրանք ևս շրջափակվել են ամուր պարսպապատերով, եղել են գլխավոր ամրոցների տեսադաշտում՝ անքակտելի կապ ստեղծելով նրանց հետ:

- Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների պեղումները բավականին խոստումնալից են: Դա նկատելի է հատկապես Նոր-բերդի և Մածնաբերդի պարագայում, որտեղ պահպանվել են տարբեր կառույցների, պատերի մնացորդների, շարվածքների վերգետնյա ուրվագծեր և այլն: Հավելենք նաև, որ ամրոցների տեղակայման թեք տեղադիրքը և ժամանակի ընթացքում գոյացած առատ բուսականությունը մեծ վնաս են հասցնում հուշարձաններին և նպաստում դրանց արագ քայքայմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Ալեքսանյան Տ., Բադալյան Հ.,** Տավուշ ամրոցի նախընթաց և ներկա հետազոտությունները, «Հայագիտության հարցեր», 2021, № 2, էջ 113-127:
2. **Ալեքսանյան Տ., Բադալյան Հ., Հախվերդյան Ա.,** Ծիսական անոթներ Տավուշ ամրոցից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2023, № 3, էջ 297-307:
3. **Ալեքսանյան Տ.,** Դիտարկումներ Մածնաբերդ ամրոցի տեղորոշման հարցի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 2024, № 1, էջ 234-244:
4. **Алексанян Т.,** Средневековая фортификация северо-восточного региона Армении. Общий обзор, История, археология и этнография Кавказа, 2024, № 2, сс. 384-397 (Scopus, Q2).
5. **Ալեքսանյան Տ., Հախվերդյան Ա.,** Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների ջրահավաք կառույցները, «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը», խմբ.՝ Ա. Բոբոխյան, Ռ. Հովսեփյան, Երևան, 2024, էջ 135-142:

АЛЕКСАНЯН ТИГРАН АЛЕКСАНОВИЧ

СРЕДЕВЕКОВАЯ ФОРТИФИКАЦИЯ БЕРДСКОГО РАЙОНА

Диссертация на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности 07.00.03 ”Археология”
Защита состоится 12-го февраля 2026 г., в 14:00, на заседании специализированного совета
007 по археологии и этнографии КВОН, действующего при Институте археологии и
этнографии НАН РА (адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению средневековой фортификации и оборонительной системы Бердского района (бывший Шамшадинский, затем Тавушский район, ныне община Берд). Регион расположен в северо-восточной части Республики Армения. На юге он граничит с Чамбаракским, на западе - с Иджеванским районом, а на севере и востоке - с Газахским, Товузским и Гетабекским районами Республики Азербайджан. Указанная территория входила в состав Тавушской области ашхара Утик Великой Армении. Сама область занимала более обширное пространство, включавшее Товузский район и часть Газахского района современной Республики Азербайджан. Работа проводилась путем изучения библиографических и литографических источников, архивных материалов, археологических артефактов, а также путем сопоставления результатов собственных исследований, проведенных на данных археологических памятников. Для реализации темы были организованы полевые разведывательные экспедиции, в ходе которых были проведены осмотры местности, изучение сохранившихся построек, исследование археологического

материала, а также реализованы обмеры, аэрофотосъемки и топографические карты на всех рассматриваемых памятниках. На территории региона сохранились фортификационные сооружения X–XIII вв. различной степени сохранности, изучение которых позволяет реконструировать общую картину средневековой фортификационной системы Бердского региона и сделать соответствующие выводы.

1. С учётом природных особенностей рассматриваемого региона, средневековые укрепления были возведены на скалистых возвышенностях, в предгорьях трёх рек, берущих начало в горах Миапор, а также по краям глубоких ущелий. Анализ историко-археологических первоисточников свидетельствует, что эти сооружения существовали в X–XIII вв., неоднократно переходили из рук в руки и были разрушены и впоследствии заброшены в результате разорительных походов монголов. Наблюдения показывают, что их естественным продолжением являлся ряд фортификационных сооружений, простиравшихся далее на север и восток. Однако их изучение на данном этапе невозможно, поскольку они находятся на территории соседнего Азербайджана.

2. Существовали неопределённости и разногласия относительно точного местонахождения двух средневековых крепостей Бердского региона - Нор-берда и Мацнаберда. В случае с Нор-бердом точное расположение памятника долгое время оставалось неясным. Однако на основании изучения письменных источников, существующих точек зрения и результатов полевых исследований было установлено, что крепость расположена на правом холме у дороги Варагаван–Вазашен и соответствует описаниям М. Бархударянца.

Что касается Мацнаберда, неоднократно упоминавшегося в исторических источниках, также существовали разногласия относительно его местоположения. Традиционно его отождествляли с крепостью Млзнаберд, сохранившейся вблизи села Човдар в Азербайджане. Эта версия была наиболее распространённой и поддерживалась рядом исследователей, отмечавших сходство в формах названия. По мнению другой части исследователей, с которой мы согласны, Мацнаберд идентичен крепости Ахчкаберд.

3. В IX–X вв. в Армении возобновились строительство и реконструкция оборонительных сооружений. Этот процесс особенно усилился в конце IX века, когда под властью Багратидов после длительного перерыва была восстановлена независимая армянская государственность. Однако Багратидам не удалось полностью сдержать усилившиеся экономические и политические центробежные силы, что привело к формированию небольших царств в различных регионах страны. Это обусловило необходимость создания новых укреплений, направленных на контроль над противником и защиту владений отдельных царств и княжеств. В результате территория Армении вновь оказалась покрыта сетью небольших укреплений, образующих оборонительные системы отдельных регионов. Они включали центральную или главную крепость и расположенные вокруг неё меньшие укрепления.

4. Главная крепость, служившая ядром таких оборонительных систем, являлась центром власти и основной резиденцией князя. Как правило, она была крупнее остальных, обладала мощными стенами и башнями, имела постоянный гарнизон и была готова отбить нападения врага. Другие крепости были относительно небольшими и иногда представляли собой лишь укреплённые наблюдательные пункты или форпосты. Они строились в пределах видимости главной крепости, их задачей было своевременно оповещать о приближении противника и, оказывая сопротивление, задерживать его продвижение. В Бердском регионе такими укреплениями, в частности, были Кацарет для Тавушской крепости и Ергеванк для Мацнаберда. Крепости, входившие в единую оборонительную систему, располагались на расстоянии визуальной связи и взаимодействовали посредством световых сигналов. Для этой же цели служили сторожевые посты-наблюдательные башни, отличавшиеся своей

структурой и обширностью обзора. Подобная наблюдательная башня задокументирована и в крепости Тавуш.

Исследования показывают, что строительство и организация обороны средневековых крепостей Бердского региона осуществлялись в соответствии с принципами, сложившимися в более ранних фортификационных традициях. Аналогичные системы известны как на территории Армении (особенно в Сюнике и Арцахе, обладающих сходными естественными условиями), так и в соседних странах, включая Киликийское армянское царство.

5. Изучение средневековых фортификационных сооружений и оборонительных систем показывает, что наряду с крепостями определённую оборонительную функцию выполняли и некоторые монастырские комплексы. Эти монастыри были обнесены мощными стенами и находились в зоне прямой видимости основных крепостей, образуя с ними единую оборонительную структуру. Топографическое положение монастырей-крепостей свидетельствует о том, что значительная их часть действительно была построена в пределах визуальной связи с фортификационными центрами. В исследуемом регионе подобная связь наблюдается в группах памятников Ергеванк–Хоранашат и Нор-берд–Варагаванк. Об этом же сообщают письменные источники: по сведениям Киракоса Гандзакеци, Нор-берд располагался рядом с Варагаванк, а крепость Ергеванк - напротив монастыря Хоранашат. Сочетание монастырских и фортификационных сооружений в рамках единой оборонительной системы было характерной чертой средневековой Армении. По мнению А. Заряна, такие комплексы образовывали бицентрические оборонительные системы, включавшие крепость и монастырь.

Известно, что в средневековой Армении монастыри являлись также и научными, образовательными и культурными центрами. В глазах противника они представляли собой привлекательные объекты для грабежа; потому на них нередко нападали, похищая церковную утварь и особенно рукописи. Так, по свидетельству Киракоса Гандзакеци, монголы, зная об особом почитании армянами Евангелий, грабили священные книги, а затем перепродавали их самим армянам.

6. Имеющиеся данные позволяют утверждать, что термин «оборонительная система» применим как к отдельным фортификационным сооружениям, так и к их группам. В первом случае он охватывает характеристики, связанные с естественной неприступностью местности, крепостными стенами, башнями, организацией подходов и входов, рвами и другими элементами обороны. Во втором случае под «оборонительной системой» подразумевается группа фортификационных сооружений, образующих общую структуру защиты определённой территории. При этом учитываются местоположение крепостей, их взаимное расположение и связи, функции и другие параметры.

7. В письменных источниках и научных исследованиях средневековые фортификационные сооружения Бердского региона, как и Армении в целом, обозначаются терминами «берд» и «амроц». Однако предполагается, что эти обозначения имеют определённые семантические различия, обусловленные функциональным назначением сооружений, что, в свою очередь, определяло их размер и архитектурную структуру. На основании имеющихся данных можно считать, что термин «амроц» применим к широкому спектру фортификационных объектов - от наблюдательных пунктов и небольших военных баз до труднодоступных убежищ, способных обеспечить кратковременную оборону. А название «берд» употребляется в отношении серьёзных оборонительных сооружений - главных крепостей, служивших резиденциями властителей и отличавшихся крупными размерами, мощными стенами и башнями.

8. Из пяти исследованных крепостей особое значение имеют раскопки Тавушской крепости, поскольку выявленные в ходе работ сооружения и археологические материалы предоставляют новые сведения не только об особенностях архитектуры и этапах

строительства памятника, но также об образе жизни населения, хозяйственной деятельности, торговых связях и оборонной системе региона.

Анализ керамического материала, обнаруженного на территории крепости, свидетельствует о культурной общности исследуемого района с другими археологическими комплексами Утика. В частности, поливная керамика X–XI вв., найденная в нижних слоях цитадели Тавушской крепости, во многом сопоставима с образцами, полученными при раскопках Тигранакерта и Орен-Калы в Арцахе. Это вполне закономерно, поскольку территория современного Бердского региона в средневековье входила в состав Утика, занимая часть исторической области Тавуш. В этом контексте прослеживаются естественные исторические, политические, торговые и культурные связи Тавушской крепости с другими центрами Утика.

ALEKSANYAN TIGRAN ALEKSAN

THE MEDIEVAL FORTIFICATION OF BERD REGION

Dissertation for the degree of Candidate of History
On the specialization "Archaeology" 07.00.03
The defense of the dissertation will be held on February 12, 2026 at 14:00
at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of the HESC
by the Institute of Archaeology and Ethnography of NAS RA
(adress: 0025, Yerevan, 15, Charents st.)

SUMMARY

The dissertation is devoted to the study of medieval fortification and defensive system of Berd region. The region (former Shamshadin, later Tavush, currently the Berd community) is located in the northeastern part of the Republic of Armenia. To the south, it borders the Chambarak district, to the west - the Ijevan district, and to the north and east - the Gazakh, Tovuz, and Getabek districts of the Republic of Azerbaijan. This territory was historically part of the Tavush province of the Utik *ashkhar* of Greater Armenia. The province itself occupied a larger area, including the present-day Tovuz district and part of the Gazakh district of modern Azerbaijan. The work was carried out by studying bibliographic and lithographic sources, archival materials, archaeological artifacts, as well as by comparing the results of our fieldwork conducted on the archaeological sites.

Within the region, fortification structures dating from the 10th–13th centuries have been preserved to varying degrees. Their study allows for the reconstruction of the overall picture of the medieval fortification system of the Berd region and the drawing of corresponding conclusions.

1. Based on natural conditions, the medieval fortifications of the studied region were constructed on rocky elevations, at the foothills of three rivers originating in the Miapor mountains, and along the edges of deep gorges. Analysis of historical and archaeological primary sources indicates that these structures existed from the 10th to the 13th centuries, passed continuously from one ruler to another, and were subsequently destroyed and abandoned as a result of the devastating Mongol campaigns. Observations show that a series of fortifications extending further to the north and east constituted their natural continuation. However, at the present stage, their study is impossible, as they are located on the territory of neighboring Azerbaijan.

2. There were uncertainties and disagreements regarding the exact location of two medieval fortresses in the Berd region - Nor Berd and Matsnaberd. In the case of Nor Berd, the precise location of the monument remained unclear for a long time. However, based on the study of written sources, existing viewpoints, and the results of field research, it was established that the fortress is

situated on the right hill along the Varagavan–Vazashen road and corresponds to the descriptions of M. Barkhudaryants.

Regarding Matsnaberd fortress, which is repeatedly mentioned in historical sources, there were also disagreements concerning its location. Traditionally, it was identified with the Mlznaberd fortress preserved near the village of Chovdar in Azerbaijan. This version was the most widespread and was supported by a number of researchers who noted the similarity in the forms of the name. According to another group of researchers, with whom we agree, Matsnaberd corresponds to the Aghjkaberd fortress, located near the village of Aygedzor.

3. In the IX-X centuries, the construction and reconstruction of defensive structures resumed in Armenia. This process intensified particularly at the end of the IX century, when under the rule of the Bagratids, following a long hiatus, an independent Armenian state was restored. However, the Bagratids were unable to fully contain the economically and politically strengthened centrifugal forces, leading to the emergence of small kingdoms in various regions of the country. This situation necessitated the construction of new fortifications aimed at controlling adversaries and protecting the territories of individual kingdoms and principalities. Consequently, Armenia once again became covered by a network of smaller fortifications forming defensive systems of individual regions, including a central or main fortress surrounded by smaller fortifications.

4. The main fortress, serving as the core of such defensive systems, acted as the center of power and the principal residence of the ruler. It was generally larger than surrounding fortifications, possessed strong walls and towers, maintained a permanent garrison, and was prepared to repel enemy attacks. Other fortresses were relatively small, sometimes representing merely fortified observation posts or outposts. They were constructed within sight of the main fortress, tasked with timely signaling the approach of the enemy and delaying their advance. In the Berd region, such fortifications included, for instance, Katsaret for Tavush fortress and Yergevank for Matsnaberd. Fortresses forming a unified defensive system were positioned within visual range of one another and communicated through signal fires. Watch posts and observation towers, distinguished by their design and field of view, served the same purpose. A similar observation tower has been documented in Tavush fortress.

Research indicates that the construction and organization of the defense of medieval fortresses in the Berd region were carried out according to principles established in earlier fortification traditions. Analogous systems are known both in Armenia (particularly in Syunik and Artsakh, which have similar natural conditions) and in neighboring countries, including the Armenian Kingdom of Cilicia.

5. Studies of medieval fortifications and defensive systems show that certain monastic complexes also performed defensive functions. These monasteries were surrounded by strong walls and located within the visual range of major fortresses, forming an integrated defensive structure. The topographical placement of monastery-fortresses indicates that a significant portion of them was indeed constructed within line-of-sight of fortification centers. In the studied region, such a relationship is observed in the monument groups Yergevank–Khoranashat and Nor Berd–Varagavank. Written sources confirm this as well: according to Kirakos Gandzaketsi, Nor Berd was situated near Varagavank, while Yergevank fortress lay opposite Khoranashat monastery. The combination of monastic and fortification structures within a unified defensive system was characteristic of medieval Armenia. According to A. Zaryan, such complexes formed bicentric defensive systems, comprising a fortress and a monastery.

It is notable that in the Middle Ages, scientific and educational-cultural life was also concentrated in monasteries. From this perspective, monasteries also appeared attractive to enemies as targets for plunder, and they were often attacked, with large quantities of church valuables and, especially, manuscripts taken as loot. For example, according to Kirakos Gandzaketsi, the Mongols, aware of the Armenians' particular reverence for the Gospels, looted sacred books and subsequently sold them back to the Armenians.

6. Available data suggest that the term “defensive system” applies both to individual fortification structures and to groups of fortifications. In the first case, it refers to the natural inaccessibility, walls, towers, the organization of approaches and entrances, moats, and other structures intended for defense. In the second case, the term refers to a group of fortifications forming an integrated system of protection over a specific territory. Here, considerations include the location of fortresses, their mutual arrangement and connections, functions, and other parameters.

7. In written sources and scholarly studies, medieval fortifications of the Berd region, as well as of Armenia in general, are referred to as “berd” and “amrots.” It is, however, assumed that these terms have distinct semantic differences determined by the functional purpose of the structures, which in turn defined their size and architectural design. Based on available data, the term “amrots” can be applied to a broad range of fortification types: from observation posts and small military bases to hard-to-reach shelters capable of providing temporary defense. The term “berd,” in contrast, is used for major defensive structures - principal fortresses serving as seats of power, distinguished by their large size, strong walls, and towers.

8. Among the five studied fortresses, the excavations of Tavush fortress are of particular significance, as the uncovered structures and archaeological materials provide new information not only about the architecture and construction phases of the monument but also about the lifestyle of the inhabitants, economic activities, trade connections, and the defensive system of the region. Analysis of ceramic materials found within the fortress indicates a cultural affinity of the studied area with other archaeological complexes of Utik. In particular, glazed ceramics of the X-XI centuries, discovered in the lower layers of the Tavush citadel, are largely comparable to specimens obtained during excavations at Tigranakert and Oren-Kala in Artsakh. This is natural, as the territory of the modern Berd region was historically part of Utik, occupying a portion of the Tavush province. In this context, the historical, political, trade, and cultural connections between Tavush fortress and other centers of Utik are evident.